

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ ՀՅԴ 1912 Թ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Նշանավոր գրող, հասարակական–քաղաքական և պետական գործիչ Ավետիս Ահարոնյանի կյանքն ու գործունեությունը սերտորեն առնչվում են մեր ժողովրդի պատմության բախտորոշ ժամանակահատվածներից մեկի՝ XIX դ. վերջի և XX դ. առաջին տասնամյակների անչափ բարդ ու հակասական, հերոսական, բայց նաև ողբերգական ու հիասթափություններով լեցուն մի պատմաշրջանի հետ: Եվ Ավետիս Ահարոնյան գրողն ու քաղաքական գործիչը բնավ այդ տարիներին տեղի ունեցած բուռն գործընթացների շարքային մասնակիցը չէր: Լինելով հայության, նաև ՀՅԴ միջավայրում հանրաձայնաչ և հեղինակավոր գործիչ, նա մշտապես գտնվել է ազգային, հասարակական ու կուսակցական քիչ թե շատ կարևորություն ունեցող գրեթե բոլոր իրադարձությունների թոհուրոհի մեջ: Բնական է, որ Ա. Ահարոնյան գործիչը դուրս չի մնացել պատմագիտության տեսադաշտից և նրա գործունեության տարբեր կողմեր լուսաբանվել են, արժանանալով թե՛ դրվատանքի, թե՛ քննադատության:

Այնուհանդերձ, Ա. Ահարոնյանի կենսագրության մեջ կա մի էջ, որը գրեթե սովերում է մնացել: Խոսքը ուսական բանտերում անցկացրած շուրջ երկու տարիների մասին է: Անդրադառնալով այդ հարցին, դաշնակցական հեղինակները, ձեռքի տակ չունենալով ստույգ վավերագրեր կամ չկարևորելով հարցը, բավարարվել են սոսկ ընդհանուր դիտարկումներ կատարելով և Ա. Ահարոնյանի կյանքի այդ տարիների մասին միայն հպանցիկ մի քանի նախադասություն գրելով¹: Մեր նպատակը Ա. Ահարոնյանի կենսագրության հենց այդ էջի լուսաբանումն է:

¹ Տե՛ս Մ. Վարանդեան, Գ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 526-527, 531:

Ռուսական 1905–1907 թթ. հեղափոխությանը հաջորդած ռեակցիան չի շրջանցում կովկասահայությանը՝ հասկապես ՀՅԴ-ին: Իշխանությունները չէին մոռացել վերջինիս ղեկավար դերակատարությունը հայոց եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու համար պայքարում և Կովկասի թաթարների դեմ 1905–1906 թթ. մղված կռիվներում: Բայց նրանց առավել գայրացրել էր 1905 թվականից սկսած ՀՅԴ ակտիվ մասնակցությունը համառուսական հեղափոխական շարժմանը: Ռուսաստանի վարչապետ Պ. Ստոլիպինը ՀՅԴ-ին համարում էր ամենավտանգավոր հեղափոխական ուժը Կովկասում և նրա հրահանգով հարձակում է ծավալվում վերջինիս դեմ: Ձերբակալվում են մի քանի հարյուր դաշնակցականներ, այդ թվում՝ հայտնի մտավորականներ, քաղաքական, հոգևոր ու գինվորական գործիչներ, որոնց տարիներով արգելափակում են Այսրկովկասի և Ռուսաստանի տարբեր բանտերում: Ի վերջո, Նովիչերկասկի շրջանային դատարանի առավել կարևոր գործերի քննիչ Ն. Լիժինի կողմից կազմվում է շուրջ 40000 էջից բաղկացած մի վիթխարի գործ, որը հիմք դարձավ 1912 թ. Պետերբուրգում կայացած «159-ի» աղմկահարույց դատավարության համար: Ավելի քան 5,5 հազար մեծածավալ տպագիր էջ պարունակող 6 սովոր հատորներում ամփոփված այդ գործը, որը պահվում է Հայաստանի ազգային արխիվում, վիթխարի փաստական նյութ է պարունակում գործով անցնող շատ գործիչների վերաբերյալ: Վերջին տարիներին այդ գործի որոշ հատվածներ «ՀՅ Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները» ընդհանուր խորագրի ներքո պատմաբան Ա. Հարությունյանի կողմից հրատարակվել են «Վեմ» հանդեսի մի շարք համարներում¹:

«Դաշնակցության գործով» անցնող 159 մեղադրյալներից մեկն Ավետիս Ահարոնյանն էր, որի գործունեության տարբեր կողմեր բացահայտող տարատեսակ նյութեր կան վերը հիշատակված գործի բոլոր հատորներում: Նշենք, որ Ա. Հարությունյանը դրանցից հրատարակել է միայն մեկը՝ քննիչ Ն. Լիժինի

¹ Տե՛ս Ա. Հարությունյան, «ՀՅ Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները», «Վեմ» համահայկական հանդես, 2009, թիվ 1, էջ 155–172, թիվ 3, էջ 165–185, 2010, թիվ 1, էջ 149–164, թիվ 2, էջ 166–184, թիվ 3, էջ 184–196, թիվ 4, էջ 186–194, 2011, թիվ 1, էջ 193–205, թիվ 2, էջ 193–216, թիվ 3, էջ 221–240, թիվ 4, էջ 182–209:

կողմից Ա. Ահարոնյանի և ևս 168 անձանց նկատմամբ ընդհանուր մեղադրանք հարուցելու որոշումը, որը կայացվել է Նովոչերկասկում՝ նախքան Ա. Ահարոնյանի ձերբակալությունը և թվագրված է 1909 թ. մարտի 13 – ապրիլի 20–ով¹: Մնացած վավերագրերն առայսօր հրապարակված չեն:

Ա. Ահարոնյանին վերաբերող մեր ձեռքի տակ եղած վավերագրերը բովանդակության առումով բազմազան են: Առաջին հերթին դրանց շարքում են ձերբակալությունից անմիջապես հետո և ավելի ուշ նրան ներկայացված նախնական ու վերջնական պաշտոնական մեղադրանքներ, հարցաքննությունների ժամանակ նրա կողմից տրված բացատրություններ, մեղադրանքը հերքելու նպատակով բերված փաստարկներ և արված միջնորդություններ:

Առանձին խումբ են կազմում որոշ անձանց, հատկապես նախկին խմբապետ Միհրանի (Գաբրիել Բեշիշյան) կողմից Ա. Ահարոնյանի դեմ տրված ցուցմունքները և մատնությունները, որոնք իրենց կնիքն են դրել առաջադրված մեղադրանքի վրա:

Նյութերի երրորդ խումբը Թիֆլիսում, Դոնի Ռոստովում (Նոր Նախիջևան) և այլ վայրերում խուզարկությունների ժամանակ հայտնաբերված կուսակցական գաղտնի փաստաթղթեր ու նամակներ էին, որոնք ապացուցում էին Ա. Ահարոնյանի մասնակցությունը ՀՅԴ տարբեր համաժողովների և նրա ոչ շարքային դերակատարությունը: Դրանք և դաշնակցական 1905–1907 թթ. լեզալ մամուլից քաղված նյութերը նաև ապացուցում էին Ա. Ահարոնյանի՝ որպես դաշնակցականի, մասնակցությունը Էջմիածնի 1906 թ. Կենտրոնական պատգամավորական ժողովին, Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրությանը և Հաազայի 1907 թ. Խաղաղության միջազգային կոնֆերանսին:

Մեծ թիվ են կազմում այն նյութերը, որոնք բացահայտում էին Ա. Ահարոնյանի գործունեությունը որպես հեղինակի և խմբագրի: Դրանցում առկա են 1905–1907 թթ. Թիֆլիսում լույս տեսած և դաշնակցական ուղղություն ունեցող թերթերի ու «Յառաջի» գրադարանի խմբագրության գործում Ա. Ահարոնյանի անմիջական մասնակցության ապացույցներ, խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերված հեղափոխական՝ սոցիալիստական–մարքսիստական, հատկապես ռուսերեն լեզվով

¹ Տե՛ս նույն տեղում, 2011, թիվ 3, էջ 221–240, թիվ 4, էջ 182–209:

գրականության ցուցակներ, դրանց բովանդակության վերաբերյալ փորձագիտական եզրակացություններ, «Դրոշակ» թերթում տպագրված նրա որոշ հոդվածների ռուսերեն թարգմանություններ և այլն:

Գործում ներառված նյութերը վկայում են, որ քննչական մարմիններն առանձնապես նշանակություն չեն տվել Ա. Ահարոնյանի գործունեության մինչև 1905 թ. ընկած ժամանակահատվածին վերաբերող փաստերին և մանրագնին ուսումնասիրության են ենթարկել հատկապես 1905–1907 թթ. ընդգրկող ժամանակահատվածը, փորձելով հայտնաբերել ռուսական պետության դեմ նրա գործունեության մասին վկայող ապացույցներ: Հետաքննության ընթացքում ձեռք բերված նյութերը հնարավորություն են տալիս՝

- ա. վերհանել բանտարկությանը նախորդած 1905–1907 թթ. Ա. Ահարոնյանի գործունեության քիչ հայտնի, ահարոնյանագետների ուշադրությունից դուրս մնացած մի շարք փաստեր,
- բ. ձշգրտել նրա դեմ գործ հարուցելու հանգամանքները, բանտարկության ժամանակագրական շրջանակները,
- գ. բացահայտել հարուցված գործի մանրամասները, իր պաշտպանությունը կազմակերպելու Ա. Ահարոնյանի ընտրած գործելակերպը, առաջադրված մեղադրանքի աստիճանական էվոյուցիան և բանտարկությունից ազատվելու հանգամանքները:

Գործում առկա փաստաթղթերը վկայում են, որ ՀՅԴ նշանավոր գործիչներից շատերի պես, Ա. Ահարոնյանը քննիչ Ն. Լիժինի տեսադաշտում հայտնվել է ձերբակալվելուց և բանտ նետվելուց ամիսներ առաջ: Քննչական մարմինը դեռևս 1907–1908 թթ. կատարած խուզարկությունների և ձերբակալությունների ընթացքում ձեռք էր բերել փաստական ապացույցներ նրանցից շատերի ՀՅԴ-ին պատկանելության վերաբերյալ: Բայց ՀՅԴ-ի դեմ վճռական հարձակում սկսելու գործում յուրատեսակ ազդանշան հանդիսացան խմբապետ Միհրանի կողմից 1909 թ. հունվարի 8-ին և փետրվարի 4-ին տված ծավալուն ցուցմունքները: Դրանցում մատնվում էին ՀՅԴ կառույցները, բազմաթիվ

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 143–154, 226–230:

գործիչներ, Այսրկովկասի տարբեր վայրերում գտնվող ՀՅԴ գի-
նապահեստները և այլն:

Միհրանի ցուցմունքներում ճշմարտությունն ու կեղծիքը մի-
ախառնված էին, ինչը հատկապես ակնհայտ էր Ա. Ահարոնյա-
նի պարագայում: Վերջինիս վերաբերյալ տալով ակնհայտ կեղծ
վկայություններ, Միհրանը թերևս նրանից վրեժ էր լուծում 1906
թ. սեպտեմբերին իրեն և իր խմբին Թիֆլիսի «Յառաջ» թերթի
խմբագրությունից փոնդելու համար, ինչի շնորհիվ հաջողվել էր
կանխել հնարավոր արյունահեղությունը¹:

Նրա 1909 թ. հունվարի 8-ի ցուցմունքներում Ա. Ահարո-
նյանը ներկայացվում էր ոչ միայն որպես ՀՅԴ Արևելյան բյու-
րոյի անդամ, որը կրում է «Ղարիբ» կուսակցական մականունը,
այլև՝ նույն բյուրոյի կողմից կովկասյան «Ահաբեկիչ մարմնի»
խորհրդի անդամ: Փետրվարի 4-ին տված ցուցմունքներում
վերը նշվածին նա հավելում է նաև այն, որ «Ղարիբը» նաև
Ա. Ահարոնյանի գրական կեղծանունն է²: Այդ վկայությունների
մեջ ճիշտ էր այն, որ «Ղարիբը» Ա. Ահարոնյանի թե՛ գրական,
թե՛ կուսակցական կեղծանունն էր: Մինչդեռ ՀՅԴ տպագիր
վավերագրերի մանրագին ուսումնասիրությունից ակնհայտ
է դառնում, որ թեև Ա. Ահարոնյանը ՀՅԴ III ընդհանուր ժո-
ղովում (1904 թ.) ընտրվել էր Արևմտյան բյուրոյի անդամ, բայց
մինչև ՀՅԴ IV ընդհանուր ժողովը և դրանից հետո Արևելյան
բյուրոյի կազմում չի ընտրվել³: Առավել ևս, խոսք չէր կարող
լինել նրա կովկասյան «Ահաբեկիչ մարմնի» խորհրդի անդամ
լինելու մասին: Բայց սա չի խանգարել, որ իր հետագա լրացու-
ցիչ ցուցմունքներում Միհրանն իրականությունից հեռու նոր
վկայություններ տա Ա. Ահարոնյանի դեմ:

1909 թ. հոկտեմբերի 8-ի ցուցմունքներում նա Ա. Ահարո-
նյանին արդեն անվանում է «Արևելյան բյուրոյի նախագահ»⁴,
պաշտոն, որ ՀՅԴ-ն երբեք չի ունեցել: 1909 թ. հոկտեմբերի 31-
ին տված ցուցմունքում նա վկայում է, որ Ա. Ահարոնյանը նաև

¹ Տե՛ս Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 404:

² Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 149-150, 152, 227:

³ Տե՛ս Նիկոլեթ Յ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիկո-
լեթեր...), խմբ. Յ. Տասնապետեանի, Բ. հատոր, Պէրյուր, 1985, էջ 134, 322, Գ. հա-
տոր, Պէրյուր, 2007, էջ 286:

⁴ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 2, թ. 1108:

ՀՅԴ-ի կողմից հրատարակվող «Յառաջ»-ի գրադարանի խմբագրական խորհրդի անդամ է՝

Իր վերջին՝ 1910 թ. մարտի 24-ի ցուցմունքներում Միհրանն անցնում է բոլոր սահմանները: «Թիֆլիսի հայկական Ներսիսյան սեմինարիայի նախկին տեսուչ Ավետիք (Ավետիս) Ահարոնյանի մասին ես կարող եմ հետևյալն ավելացնել,— հայտարարել է նա,— Ահարոնյանը կուսակցության Արևելյան բյուրոյի և բյուրոյին առընթեր «Ահաբեկչական խորհրդի» («Ահաբեկիչ մարմին») նախագահն էր... Ես լսել եմ,— շարունակում է նա,— որ «Դաշնակցություն» կուսակցության պարագլուխները ներկայումս որոշել են կաթողիկոսից պահանջել, որպեսզի վերջինս միջնորդի Ինքնակալ Կայսեր առջև՝ ազատ արձակելու Ավետիս Ահարոնյանին»²: Այդ հայտարարությունից հետո, անհասկանալի է, թե ինչու այդքան ուշացումով, նա հանկարծ հիշում է, որ Ա. Ահարոնյանը 1907 թ. հունիսին, լինելով Ներսիսյան դպրոցի տեսուչ, օգտվելով իր դիրքից, «Խարիսխ» թերթի խմբագրություն է կանչել և բանտարկել Ներսիսյան դպրոցի աշակերտ, իր քրոջ որդի Գասպար Նազարյանին, որը խոչընդոտել էր իրագործել իր եղբայր Հարեթ Վարդերեսյանի վերաբերյալ ՀՅԴ-ի կայացրած ահաբեկման վճիռը³: Այս պատմության մեջ կեղծիքն ավելի քան ակնհայտ էր, քանի որ Ա. Ահարոնյանը Ներսիսյան դպրոցի տեսուչի պաշտոնում հաստատվել էր միայն 1907 թ. օգոստոսին, իսկ հետաքննությունն էլ հետագայում պարզել է, որ Միհրանի նշած ժամկետում Գասպար Նազարյանը Ներսիսյան դպրոցում չի սովորել:

Բնական է, որ նմանատիպ ցուցմունքները, նախքան դրանց կեղծ լինելը պարզելը, բավականին բարդ իրավիճակ պետք է ստեղծեին Ա. Ահարոնյանի համար: Նովոչերկասկում կայացված և 1909 թ. մարտի 13 – ապրիլի 20–ով թվագրված «Որոշումով»՝ Ն. Լիժինը բացահայտված է համարում 169 անձանց, այդ թվում՝ Ա. Ահարոնյանի պատկանելությունը ՀՅԴ-ին և որոշում նրանց՝ «որպես մեղադրյալների ներգրավել Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով...»⁴: Ընդ որում, ՀՅԴ գործիչնե-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1344:

² Նույն տեղում, թ. 2190-2191:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ «Վեմ» համահայկական հանդես, 2011, թիվ 4, էջ 209:

րի ցուցակը սկսվում էր Արևելյան բյուրոյի կազմով, որում առաջինը նշված էր Ավետիս Ահարոնյանի անունը: Նրա դեմ առաջադրվում էին հետևյալ մեղադրանքները.

- ա. նա հանդիսանում է «Ահաբեկչական գործադիր խորհրդի» անդամ,
- բ. 1905 թ. նոյեմբերի 13–30–ը Թիֆլիսում կայացած ՀՅԴ Կովկասյան շրջանային ժողովի փաստաթղթերը, որոնք հայտնաբերվել էին 1908 թ. դեկտեմբերին՝ Վլադիկավկազում կատարված խուզարկության ժամանակ, վկայում էին, որ «նա այդ ժողովում կուսակցության անդամների հեղափոխական գործունեության, ծրագրի, ոռուսական պետության մեջ կառավարող իշխանության դեմ պայքարի համար հայերի զինման հարցերի քննարկման առնչությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել»,
- գ. նրա՝ ՀՅԴ բյուրոյի անդամ լինելը հաստատված էր համարվում 1907 թ. ամռանը Թիֆլիսում Սերգեյ և Փաշո Եղիզարովների գրասենյակի խուզարկության ժամանակ գտնված երկու փաստաթղթերով և ՀՅԴ «Ղազախի» (Չականա) շրջանի կուսակցական հաշվեգրքի գրառումներով, որտեղ նշվում էր նրա կողմից գեներ գներու համար տրված 2820 ռուբլի գումարի մասին¹:

Կայացված որոշմանը, բնականաբար, պետք է հաջորդեին համատարած ձերբակալությունները: «Դաշնակցության գործում» ստույգ չի մատնանշվում, թե երբ է ձերբակալվել Ա. Ահարոնյանը: Լոկ արձանագրվում է 1909 թ. ապրիլին Թիֆլիսում նրա տանը կատարված խուզարկության փաստը²: Այս և որոշ այլ հարցերում հստակություն են մտցնում 1909 թ. մայիսի 7–ին Թիֆլիսից Ժնև՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոյին ուղարկված նամակի հետևյալ տողերը. «Ի հարկե, այստեղի անծայր ձերբակալությունների մասին այդտեղ լսած կը լինեք: Ապրիլ 23–25ին նորից մասսային ձերբակալումներ կատարուեցան թե՛ Թիֆլիսում եւ թե՛ գաւառում: Թիֆլիսում ձերբակալուած են այս վերջին անգամին ի միջի այլոց Աւետիս Ահարոնեանը, Ստ. Մայլխասեանը, Ա. Մելիք–Ազարեանը եւ ուրիշ շատերը: Գրում եմ Աւետիսի մասին:

¹ Տես ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 316, նույնը՝ «Վեմ» համահայկական հանդես, 2011, թիվ 3, էջ 223–224:

² Տես ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1723:

Մա մի կերպ յաջողացրել էր մի տոմսակ ուղարկել, որով յայտնում է, որ իրան մեղադրում են պատժագրքի 102 յօդուածի հիման վրայ (տաժանակիր աշխատանք 4-ից մինչև 8 տարի) Հասագայի Խաղաղութան կոնֆերանսին պատգամաւոր գնալու համար... Ձերբակալութիւնը կատարուել է... Նովոչերկասկի պրոկուրորի եւ քննիչի կարգադրութեամբ: ...Աւետիսին ձերբակալել են միայն 14 օր սրանից առաջ եւ երէկ արդէն նրան, Մելիք-Ազարեանի ու երկու ուրիշների... ամենախիստ հսկողութեան ներքոյ տարան այստեղից, ասում են, Նովոչերկասկ»¹:

Այսպիսով, նամակագրի տեղեկատվությունից ակնհայտ է, որ Ա. Ահարոնյանը ձերբակալվել է 1909 թ. ապրիլի 23–24–ին՝ Ն. Լիժինի անմիջական կարգադրությամբ: Ինչ վերաբերում է մայիսի 6–ին նրան Նովոչերկասկ տեղափոխւելուն և ներկայացված մեղադրանքին, ապա նամակագրի տեղեկատվությունը լիարժեք չէ: Բանն այն է, որ Թիֆլիսից Ա. Ահարոնյանին սկզբնապես տեղափոխել են Բաքու, որտեղ էլ 1909 թ. մայիսի 28–ին նա հարցաքննվել է Բաքվի շրջանային դատարանի առավել կարևոր գործերի դատական քննիչ Մոզգունովի կողմից: Այստեղ էլ նրան ներկայացվել է պաշտոնական մեղադրանք և կայացվել բանտում կալանքի տակ պահելու որոշում²: Հավանաբար, դրանից հետո նրան փոխադրել են Նովոչերկասկ: Ինչ վերաբերում է առաջադրված մեղադրանքին, ապա բովանդակային առումով հիմնականում նույնը լինելով, նախնականի համեմատ կային լոկ որոշակի ձգքոտումներ.

- ա. եղել է Արևելյան բյուրոյի նախագահը և Ահաբեկչական գործադիր խորհրդի (Ահաբեկիչ մարմին) անդամ,
- բ. ինչպես երևում է ՀՅԴ-ի 1905 թ. նոյեմբերի 13–30–ի շրջանային ժողովի արձանագրություններից, այդ ժողովում նշանակալի մասնակցություն է ունեցել կուսակցության անդամների հեղափոխական գործունեության, նրա ծրագրի, ոռոսական պետությունում կառավարող իշխանության դեմ պայքարելու համար հայերին զինելու հարցերի քննարկմանը,
- գ. ինչպես երևում է կուսակցության բյուրոյի հաշվետվություններից, 1906 թ. մասնակցություն է ունեցել վերը նշված նպատակների համար գենքի ձեռք բերմանը, որպես կուսակցու-

¹ Նիլթեր..., խմբ. Ե. Փամբուկեան, Թ. հատոր, ա. տ., ա. թ., էջ 178:

² Տեն ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 559–561:

թյան բյուրոյի անդամ և նախագահ այդ նպատակի համար տրամադրելով 2820 ռուբլի,

դ. կուսակցության բյուրոյի անունից, որպէս նրա անդամ, իր ստորագրությամբ տարբեր կարգադրություններ է արել:

Առաջադրված մեղադրանքի կետերը շատ չէին, բայց լուրջ էին և Ա. Ահարոնյանին, իրոք, սպառնում էր 4–8 տարվա տաժանակիր աշխատանք: Նա, ինչպէս ձեռքակալված մյուս դաշնակցականները, վճռականորեն չի ընդունել մեղադրանքը՝ բերելով հետևյալ փաստարկները.

ա. ինքը երբևիցէ չի պատկանել Դաշնակցությանը և ընդհանրապէս որևէ այլ կազմակերպության, քանի որ գրականագետի իր գործունեությունը թոյլ չի տալիս կուսակցական շահեր հետապնդել,

բ. եթէ ինքը երբևէ կասկածվեր հակակառավարական բնույթի որևէ կուսակցության կամ կազմակերպության անդամակցության մեջ, ապա 1907 թ. չէր կարող ոչ ընտրվել Ներսիսյան դպրոցի տեսուչ, ոչ էլ որպէս Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ–պատվիրակ մասնակցել Հաագայի կոնֆերանսին,

գ. չի եղել ոչ Արևելյան բյուրոյի, ոչ էլ ահաբեկչական խորհրդի անդամ, բյուրոյի ժողովների չի մասնակցել և դրանց մասին չի լսել, 1905 թ. գարնանից մինչև ուշ աշուն իր ընտանիքի հետ բնակվել է արտասահմանում և, բնականաբար, բացակայության պայմաններում չէր կարող բյուրոյի նախագահ լինել,

դ. 1906 թ. նոյեմբերին եղել է Թիֆլիսում, բայց անկողնային ծանր հիվանդ էր և 3 ամիս բուժվել է, զենք ձեռք բերելու համար դրամ չի տվել և, որպէս բյուրոյի անդամ, կուսակցական կարգադրություններ չի արել, ուստի ցանկանում է իր աչքով տեսնել դրանց վերաբերյալ փաստաթղթերը, քանի որ այդ ամենը համարում է թյուրիմացություն¹:

Ա. Ահարոնյանն, ի սկզբանէ, փորձում էր պաշտպանության համար օգտագործել նաև Եվրոպայում, հատկապէս Ֆրանսիայում ՇՅԴ–ի և իր ունեցած կապերը՝ ռուսական իշխանությունների վրա ճնշում գործադրելու համար: Այդ մասին են վկայում ՇՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմնին Արևմտյան բյուրոյի

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 560:

1909 թ. հունիսի 4-ին գրած նամակի հետևյալ տողերը. «Պետերբուրգից ու Թիֆլիսից ստացած նամակներից երեւում է, որ ռուս կառավարութիւնը ուզում է ծանր կերպարանք տալ մերոնց գործին: Բաւական է յիշել, որ Աւետիքին, օրինակ, սպառնում է 4–8 տարի տաժանակիր աշխատանք. այդպէս է նա մեզ հաղորդում ուրիշների միջոցով: Յանցանքը... La Haye-ի խորհրդածոդովին ներկայանալն է... Գրեցինք, խնդրեցինք մեր բարեկամներին Պարիզ. գուցէ կարողանան Նելիտովի միջոցով ազդել ուր հարկն է...»¹:

Բաքվում Ա. Ահարոնյանին ներկայացված մեղադրանքի կետերի պարզ դիտարկումն անգամ ցույց է տալիս, որ դրանցում խոսք չկար Հաագայի Խաղաղության կոնֆերանսին նրա մասնակցության մասին՝ որպէս հանցանքի: Ընդհակառակը, ինչպէս վերը տեսանք, Ա. Ահարոնյանը սկզբնապէս այդ փաստը նույնիսկ փորձել է օգտագործել իր անմեղությունն ապացուցելու համար: Միայն ավելի ուշ, երբ գործի մեջ ներգրավվեցին Դոնի Ռոստովում Միմոն Վրացյանի տանը կատարված խուզարկության հետևանքով առգրավված նոր փաստաթղթեր, Հաագայի կոնֆերանսին Ա. Ահարոնյանի մասնակցության փաստը հետաքրքրեց Ն. Լիժինին: Բանն այն է, որ առգրավված, 1907 թ. հուլիսի 20-ով թվագրված, նամակի լուսանցքում գրված էր հետևյալ նախադասությունը. «Ահարոնյանը Փարիզում է, նա պետք է ուղևորվի Հաագա՝ «Դաշնակցության» կողմից մասնակցելու կոնֆերանսին»²:

Տևական ժամանակ պետք եղավ, որպէսզի Ա. Ահարոնյանը կարողանա ազատվել այդ մեղադրանքից: 1910 թ. հոկտեմբերի 26-ին Նովոչերկասկում կայացած հարցաքննության ժամանակ նա այդ հարցի վերաբերյալ բացատրություններ է տալիս Ն. Լիժինին՝ փորձելով ապացուցել, որ ինքը Հաագայի կոնֆերանս է մեկնել ոչ թե որպէս Դաշնակցության ներկայացուցիչ, այլ որպէս կաթողիկոսի պատվիրակ՝ նշելով, որ կաթողիկոսի դիվանում դրա վերաբերյալ պետք է որ պահպանված լինեն համապատասխան փաստաթղթեր: Որպէս իր օգտին խոսող հանգամանք, նա նաև մատնանշում է այն փաստը, որ կոնֆերանսի նախօրեին իրենց՝ որպէս Ամենայն հայոց կաթողիկոսի պատ-

¹ Տէն Նիւթեր..., Է. հատոր, խմբ. Ե. Փամբուկեան, ա. տ., ա. թ., էջ 251:

² ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 471:

վիրակների, ընդունել է կոնֆերանսի նախագահ, Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդովը¹: Ավելի ուշ՝ հավանաբար 1911 թ. հունվարի 3-ին, կատարած իր միջնորդություններում Ա. Ահարոնյանը կրկին անդրադառնում է այդ հարցին՝ առաջարկելով իր ասածները հաստատելու նպատակով ուսումնասիրել ռուսական դեսպանության փաստաթղթերը, նաև հարցաքննել այդ դեպքերին ներկա ֆրանսիացի նշանավոր հայասեր գործիչ Վիկտոր Բեռարին, նրա կնոջը, Անատոլ Ֆրանսին, Լեոն Բուրժուային, եպիսկոպոս Ութուջյանին և Հ. Շահնագարին²: Ն. Լիժինը, որ մինչ այդ՝ 1910 թ. դեկտեմբերի 8-ին արդեն ծանոթացել էր Մկրտիչ Խրիսյանի 1907 թ. հուլիսի 4-ի կոնդակի սևագրին³, որում Ա. Ահարոնյանը ներկայացվում էր որպես Հաագայի կոնֆերանսում կաթողիկոսի ներկայացուցիչ, բավարարվում է դրանով, չբացատրելով հանդերձ, որ Ա. Ահարոնյանը Հաագայի կոնֆերանսին մասնակցել է նաև որպես «Իաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ»⁴: Բոլոր դեպքերում, դատախազը հետագայում հրաժարվում է այդ հարցով նրան մեղադրանք ներկայացնելուց:

Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ Ա. Ահարոնյանին ներկայացված նախնական հիմնական մեղադրանքների սնանկ լինելը: Իրանցից չհրաժարվելով հանդերձ, մեղադրող կողմը փնտրում էր նորերը: Եվ այդ փնտրտուքը, Ն. Լիժինի կարծիքով, ի հայտ է բերում Ա. Ահարոնյանի հեղափոխական, հակառուսական-հակապետական գործունեության նոր փաստեր: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Ա. Վրացյանի տանը կատարված խուզարկության ժամանակ առգրավված ծոցատետրում Ն. Լիժինի ուշադրությունը գրավում են ՀՅԴ IV ընդհանուր ժողովի ընթացքի վերաբերյալ Ա. Վրացյանի արած գրառումները: Մասնավորապես կար տեղեկատվություն ընդհանուր ժողովի վերջին՝ 1907 թ. մայիսի 4-ի նիստում և նույն օրը կազմակերպված ընդհանուր ընթերիքի ժամանակ Ղարիբի (Ա. Ահարոնյան) արտասանած հիանալի ճառերի մասին⁵: Ա. Ահարոնյանն, իրոք, եղել է ՀՅԴ Կարսի կառույցի

¹ ՏԵՍՆՆ Լույն տեղում, գ. 5, թ. 4201:

² ՏԵՍՆՆ Լույն տեղում, գ. 6, թ. 4392:

³ ՏԵՍՆՆ Լույն տեղում, գ. 5, թ. 4362:

⁴ ՏԵՍՆՆ Լույն տեղում, գ. 6, թ. 4531:

⁵ ՏԵՍՆՆ Լույն տեղում, գ. 1, թ. 486:

պատգամավորն ընդհանուր ժողովում, բայց շատ ուշացումով և միայն վերջին օրերին է մասնակցել դրան: Այնուհանդերձ, դա չխանգարեց, որ նրան կարևոր դեր վերագրվի ՀՅԴ նոր՝ հեղափոխական ծրագրի ընդունման գործում՝ առաջադրելով նոր մեղադրանք:

1910 թ. մարտի 24–25–ին Ն. Լիժինի կողմից ուսումնասիրության են ենթարկվում Էջմիածնի Կենտրոնական ժողովի (1906 թ. օգոստոսի 17–30) վերաբերյալ նախապես պահանջված փաստաթղթերը: Նաև լրացուցիչ հարցաքննվում են Էջմիածնի Սինոդի նախկին դատախազ Ֆրենկելը, Էջմիածնի գավառային ոստիկանապետ Լ. Լիմերմանը և այլ վկաներ: Ֆրենկելը Ա. Ահարոնյանին բնութագրում է որպես ժողովի մասնակիցների շրջանում հեղափոխական տրամադրություններ պահպանող դաշնակցական պատգամավորի: Նա նաև վկայում է, որ որպես Կենտրոնական ժողովի նախագահ սկզբնապես առաջարկվել է Ա. Ահարոնյանի թեկնածությունը, որից նա հրաժարվել է: Լ. Լիմերմանը ևս նրան բնութագրում է որպես դաշնակցական պատգամավորի, որը ժողովի փակման կապակցությամբ, 35 պատգամավորների թվում, ստորագրել էր հետևյալ բողոքը. «Տալով սույն ստորագրությունը, բողոքում ենք նման կարգադրության դեմ, որը խախտում է յուրաքանչյուր քաղաքացու ազատ խոսքի և ժողովների անկապտելի իրավունքը, ինչպես նաև ոտնահարում իր ազգային–մշակութային գործերը ազատ լուծելու յուրաքանչյուր ժողովրդի իրավունքը»¹: Այս ամենը Ն. Լիժինին հիմք են տալիս սկզբնական մեղադրանքներին հավելելու ևս մեկը:

Հետաքննության ուղադրության կենտրոնում շուտով հայտնվում է Ա. Ահարոնյանի գրական–խմբագրական գործունեությունը: Մանրակրկիտ ուսումնասիրվում են ոչ միայն նրա հեղինակած գործերը, այլև նրա տան խուզարկության ժամանակ հայտնաբերված հայ և օտար հեղինակների, այդ թվում՝ «Յառաջ»-ի գրադարանի գրքերը: Թարգմանվում կամ գրաքննության են ենթարկվում կասկած հարուցող գրքերը: Այդ կերպ հետաքննությունը ձգտում էր Ա. Ահարոնյանի համար ստեղծել հեղափոխականի կերպար:

Դատական գործում առկա է մի փաստաթուղթ, որում նշվում է, որ Թիֆլիսի մամուլի գործերի կոմիտեն 1910 թ. հու-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 1711–1715, 2192, 2262, գ. 4, թ. 3153:

նիսի 5-ին գրությամբ դիմել է Ն. Լիժինին «...իրեն ուղարկելու «Յառաջ»-ի գրադարանի հրատարակություններից երկուական օրինակ՝ դրանք բռնագրավելու գործ հարուցելու և հեղինակներին ու թարգմանիչներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար...»¹: Չի բացառվում, որ կոմիտեի այդ նախաձեռնությունը կարող էր հրահրված լինել Ն. Լիժինի կողմից: 1905–1907 թթ. լեգալ տպագրված «Յառաջ»-ի գրադարանի գրքերը օրենքից դուրս դնելով, նա հնարավորություն էր ստանում լրացուցիչ մեղադրանք հարուցել ոչ միայն դրանց հեղինակների ու թարգմանիչների, այլև գրադարանի տպագրությունն ուղղորդող խմբագրական հանձնաժողովի անդամների հանդեպ, որոնցից մեկն էլ Ա. Ահարոնյանն էր:

Նույն կերպ քննիչի ուշադրության կենտրոնում է հայտնվում դաշնակցական մամուլը, հատկապես՝ 1905–1907 թթ. Թիֆլիսում լեգալ հրատարակված, բայց կարճ կյանք ունեցած «Յառաջ», «Ալիք», «Խարիսխ», «Ժողովուրդ» և այլ թերթերը: Հետաքննության ձեռքի տակ առկա կուսակցական փաստաթղթերը, այդ թերթերում տպագրված նյութերի բովանդակությունը և որոշ այլ փաստեր որևէ կասկած չէին թողնում դրանց կուսակցական պատկանելության վերաբերյալ²: Գաղտնիք չէր Ա. Ահարոնյանի «Յառաջ»-ի խմբագրության անդամ և «Ալիք» թերթի խմբագիր լինելը, ինչը թույլ էր տալիս ուժեղացնել նրան ներկայացվող վերջնական մեղադրանքը:

Ա. Ահարոնյանին ևս մեկ մեղադրանք ներկայացնելու առումով հետաքննության համար իսկական գտածո էր ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակի» 1905 թ. թիվ 7-ում «Լարիք» ստորագրությամբ լույս տեսած «Փառք քեզ» հոդվածի ռուսերեն թարգմանությունը³: Այդ հոդվածն ակնհայտորեն ուներ հակառուսական, հակաիշխանական շեշտադրումներ և օգտագործվեց Ն. Լիժինի կողմից:

Այսպիսով, չբավարարվելով սկզբնական նախաքննության ընթացքում ձեռք բերվածով, քննչական մարմինը 1909 թ. կեսերից մինչև 1910 թ. աշուն ընկած ժամանակահատվածում

¹ Նույն տեղում, գ. 4, թ. 2898:

² Տե՛ս Նույն տեղում, գ. 2, թթ. 841, 1486, 1489–1490:

³ Տե՛ս Նույն տեղում, գ. 3, թթ. 1864–1865: Տե՛ս ևսև՝ «Դրոշակ», 1905, թիւ 7, էջ 109:

հետևողականորեն ուսումնասիրել է Ա. Ահարոնյանի գործունեությունը 1905–1907 թթ.՝ որոնելով ավելի համոզիչ հանցանշաններ և առաջադրելով նոր մեղադրանքներ: Այնպես որ, 1910 թ. հոկտեմբերի 26–ին Ն. Լիժինի կողմից հարցաքննվելու ժամանակ նա արդեն բացատրություններ է տալիս ոչ միայն նախնական մեղադրանքի ու Հաագայի կոնֆերանսին իր մասնակցության, այլև՝ «Ալիք» թերթի կուսակցական պատկանելության, «Յառաջ» թերթի խմբագրության անդամ լինելու, Էջմիածնի Կենտրոնական ժողովին մասնակցության, 1907 թ. մայիսի սկզբին Վիեննայում գտնվելու և ՀՅԴ IV ընդհանուր ժողովին մասնակցելու, «Դրոշակում» տպագրված «Փառք քեզ» հոդվածի հետ առնչության, իր «Ազատության ձանապարհին» գիրքը «Դրոշակի» տպարանում տպագրվելու և այլ հարցերի վերաբերյալ՝

Ա. Ահարոնյանի համար ստեղծված այս բարդ իրավիճակը նկատի ուներ այդ օրերին Նովոչերկասկում գտնվող Ռուբինա Արեշյանը, երբ մեղադրյալներին կազմված ընդհանուր գործի հետ ծանոթացնելու օրերին՝ 1910 թ. դեկտեմբերին՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոյին հղած նամակում գրում է հետևյալ տողերը. «Խեղճ Աւետիսի գործ ծանրացաւ. Քննիչը ուզում է դուրս բերի նրան կուսակց[ութեան] ներշնչող, Բիրոյի անդամ, Հաագա գնացող կուսակցութեան կողմից, նախագահ տեղորիստ] խումբի եւ այլ խաթաբալեք»³:

Մեղադրող կողմի ներկայացրած, ի վնաս իրեն խոսող անխտիր բոլոր, անգամ ակնհայտ ճիշտ, փաստերը ժխտելու գործելակերպին Ա. Ահարոնյանը հավատարիմ է մնացել բանտարկության ողջ ընթացքում: Ն. Լիժինի կողմից հարցաքննվելու ժամանակ նա դարձյալ հերքում է բոլոր մեղադրանքները, կրկնում դեռևս 1909 թ. մայիսի 28–ին իրեն արդարացնելու համար բերած բոլոր փաստարկները և դրանց ավելացնում նորերը:

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թթ. 4200–4201:

² «Նիւթեր...»-ում Ե. Փամբուկյանը, կասկածելով հանդերձ, այդ փաստաթուղթը թվագրել է 1909 թ. դեկտեմբերի 25–ով, ինչը ճիշտ չէ: Գործում առկա վավերագրերը ակնհայտ ցույց են տալիս, որ մեղադրյալները գործի հետ ծանոթացել են հին տոմարով 1910 թ. նոյեմբերի 13 – դեկտեմբերի 20 ժամանակահատվածում: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4374:

³ Նիւթեր..., Թ. հատոր, էջ 203:

Ավելին, հարուցված գործի մանրամասներին ծանոթանալուց հետո, 1911 թ. հունվարի 3-ին, նա հանդես է գալիս 12 կետանոց հայտարարությամբ: Հարց էր բարձրացվում, որպեսզի հարուցված մեղադրանքի մի քանի կետերի վերաբերյալ հարցաքննվեն հայ և այլազգի տասնյակ նոր վկաներ (Լեո, Ղ. Աղայան, Ս. Հարությունյան, Գր. Խալաթյան, Յու. Վեսելովսկի, Մ. Տեր-Մովսիսյան, Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյան, Գ. Չորեքչյան, Ն. Մառ, Վ. Բեռար, Ա. Ֆրանս, Լ. Բուրժուա և այլք), որոնք կարող են հաստատել իր ցուցմունքները և իր համար ալիբի ապահովել: Առաջարկվում էր տարբեր հիմնարկներից պահանջել և գործին կցել մի շարք գրություններ, հարցաքննել Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներին ու հետագոտել դպրոցի արձանագրությունները, որոնք կապացուցեն, որ ինքն այդ դպրոցի տեսուչ է դարձել միայն 1907 թ. օգոստոսին: Կասկածի տակ էր դնում մինչ այդ կատարված ձեռագրագիտական փորձաքննության հավաստիությունը և միջնորդում իրականացնել նոր փորձաքննություններ՝ գործում ներգրավելով մասնագետ փորձագետների ու ձեռագրագետների՝ ի դեմս Նոր Նախիջևանի հայկական թեմական դպրոցի ուսուցիչների: Եվ վերջապես, վերջին՝ 12-րդ կետով հարց էր բարձրացնում իր դեմ որպես խափանման միջոց կիրառված բանտարկությունը փոխարինել գրավով¹:

Նման գործելակերպը, երբ կասկածի տակ էին առնվում մեղադրանքի անգամ ակնհայտ ճիշտ կետերը և պահանջվում նոր վկաների հարցաքննություններ կամ ձեռագրագիտական փորձաքննություններ, առաջին հայացքից տարօրինակ է թվում: Բայց դրանք միանգամայն ընկալելի են պաշտպանական կողմի մշակված ընդհանուր մարտավարության տեսանկյունից: Ա. Ահարոնյանը նույնպես առաջնորդվում էր մեղադրյալների դրսից ստացած այն հրահանգներով, որոնց մի օրինակը քննիչ մարմինը 1911 թ. հունվարին հայտնաբերել էր ՀՅԴ նշանավոր գործիչ Ավետիք Սահակյանի մոտ²: Ն. Լիժինը, ծանոթ լինելով այդ փաստաթղթին և պաշտպանական կողմի ընտրած մարտավարությանը, մեկ առ մեկ անդրադառնում է հայտարարության կետերին, տարբեր հիմնավորումներով մերժում նոր վկաներ

¹ Տես ՅԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4392:

² Տես նույն տեղում, թթ. 4447-4448

հարցաքննելու և ձեռագրագիտական փորձաքննություն անցկացնելու Ա. Ահարոնյանի պահանջները և ապացուցված համարում ներկայացված մեղադրանքների իսկությունը¹:

Ինչ վերաբերում է խափանման միջոց բանտարկությունը գրավով փոխարինելու Ա. Ահարոնյանի միջնորդությանը, ապա գործի հատորներում բացակայում է դրա վերաբերյալ քննիչի կայացրած առանձին որոշումը, ինչն առկա է տասնյակ այլ մեղադրյալների դեպքում: Գործի վերաբերյալ կայացված «Որոշման» վերջում առկա է 63 մեղադրյալների մի ցուցակ, որոնց բանտարկությունը գրավով փոխարինելու խնդրանքը մերժվում էր: Այդ ցուցակում Ա. Ահարոնյանի ազգանունը բացակայում է²: Հետևաբար, նա մինչ այդ արդեն ազատվել էր: Ազատման մոտավոր ժամանակը թույլ են տալիս ճշտել երկու հայտնի փաստեր: ՀՅԴ Բաքվի ԿԿ-ի կողմից «Դրոշակ»-ի խմբագրությանը 1911 թ. հունվարի 25-ին գրված նամակում առկա են հետևյալ տողերը. «Նոր հեռագիր ստացուեց. Ա. Ահարոնյանին բաց թողնելու համար երաշխադրություն են պահանջում 20.000 ռուբլի»³: Իսկ արդեն 1911 թ. փետրվարին եվրոպական մամուլում տպագրվել են շտրիափորական հեռագրեր Ա. Ահարոնյանի ազատվելու վերաբերյալ⁴:

Գրավով ազատվելը Ա. Ահարոնյանին չէր ազատում պատասխանատվությունից: 1911 թ. մայիսի 28-ին դատախազի կողմից Նովոչերկասկում ստորագրված «Մեղադրական ակտ» փաստաթղթի մեղադրյալների ցուցակում 17-րդը նշված է նրա անունը: Ամբողջովին Ա. Ահարոնյանին են վերաբերվում փաստաթղթի մի քանի թերթեր՝ կրկնելով արդեն իսկ հիշատակված մեղադրանքները⁵:

«Մեղադրական ակտ»-ի վերջում Ա. Ահարոնյանի դեմ ներկայացված վերջնական՝ դատարան ուղարկվող մեղադրանքն ուներ հետևյալ բովանդակությունը. «Ավետիս Ահարոնյանը, կրելով պայմանական «Դարիք» անունը, 1905 թ. մասնակցություն է ունեցել «Դաշնակցություն» ընկերակցության Կովկաս-

¹ ՏՆԱ նույն տեղում, թթ. 4528–4531:

² ՏՆԱ նույն տեղում, թ. 4607:

³ Նիւթեր..., Թ. հատոր, էջ 216:

⁴ ՏՆԱ նույն տեղում, էջ 242:

⁵ ՏՆԱ ՉԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 64–66:

յան շրջանային ժողովին, որում քննարկվել և մշակվել է Ռուսական կայսրության սահմաններում ընկերակցության ակտիվ հեղափոխական գործունեության ծրագիր: Աշխատակցել է ընկերակցության պաշտոնական օրգան «Դրոշակ»-ին՝ նրանում գետեղելով «Փառք քեզ» խորագրով հոդված, որում Ռուսաստանի հայ բնակչությանը խոտվարարական արարքներ իրականացնելու կոչ էր արվում, գիտենալով, որ այդ ամսագիրը Ռուսաստանի սահմաններում տարածում ունի: Եղել է ընկերակցության «Յառաջ» թերթի խմբագրության անդամ և «Յառաջ»-ի գրադարանը հրատարակող հանձնախմբի անդամ, որը լույս է ընծայել ընկերակցության նպատակներին համապատասխանող բնագիր և թարգմանական երկեր: 1906 թ. խմբագրել է շրջանային «Ալիք» թերթը, որն իր էջերում տպագրում էր ընկերակցության տարբեր կազմակերպությունների որոշումներ: Որպես «Դաշնակցության» պատգամավոր մասնակցել է Էջմիածնի համագումարի (Կենտրոնական ժողով – ՀԳ.) ժողովներին, որն իրեն հայտարարել էր ամբողջ հայ ժողովրդի օրինական ներկայացուցիչ՝ իրավասու լուծելու նրա բոլոր գործերը, դպրոցական, տնտեսական, վարչական, գույքային և այլ հարցերում...: 1907 թ. ստանձնել և իրականացրել է հանձնառություն մասնակցելու ընկերակցության Վիեննայում կայացած IV ընդհանուր ժողովին, որը հաստատել է Կովկասյան շրջանային ժողովի կողմից առաջարկված սոցիալիստական ծրագիրը և «Դաշնակցության» հեղափոխական մարտավարությունը Ռուսաստանում»¹:

Ինչպես տեսնում ենք, Ա. Ահարոնյանին 1909 թ. առաջադրված սկզբնական մեղադրանքներից պահպանվել էր միայն մեկը՝ ՀՅԴ Կովկասյան 1905 թ. շրջանային ժողովին մասնակցելու մեղադրանքը: Դատախազը հրաժարվել էր մեղադրանքի առավել ծանր՝ ՀՅԴ Արևելյան բյուրոյի նախագահ և «Ահաբեկչական գործադիր խորհրդի» անդամ լինելու իրականության հետ կապ չունեցող կետերից: Հիշատակություն չկար նաև որպես Դաշնակցության պատվիրակ Հաագայի կոնֆերանսին մասնակցելու մասին: Դրա կողքին, մեղադրականում տեղ էին գտել նախնական մեղադրանքին ավելի ուշ հավելված, մեր կողմից հիշատակված կետերից մի քանիսը, որոնցում մեղադրող կողմը լիովին համոզված էր: Դրանով հանդերձ, վերջ-

¹ Նույն տեղում, թթ. 239–240:

նական մեղադրանքով Ա. Ահարոնյանն այլևս գլխավոր մեղադրյալների թվում չէր: Պատահական չէ, որ եթե նախաքննության ընթացքում նրա անունը մշտապես տեղ էր գտնում մեղադրյալների ցուցակի վերին մասում, ապա դատարան կանչվելիք մեղադրյալների ցուցակում նա արդեն 82-րդն էր¹:

Ինչո՞վ էր պայմանավորված Ա. Ահարոնյանին գրավով ազատելը: Բանն այն է, որ բանտում նա վարակվել էր թոքախտով: Դա մեծ տագնապ է առաջացնում նրա զինակիցների մոտ, որոնք նրան ազատելու համար եռանդուն քարոզչություն են ծավալում Եվրոպայում՝ այդ գործում ներգրավելով նաև հայասեր գործիչների: Ամիսներ տևած պայքարն ունենում է իր հանգուցալուծումը: Այն բանից հետո, երբ 1911 թ. հունվարի 12-ին Ա. Ֆրանսը, Ֆ. դե-Պրեսանսեն, Վ. Բեռարը, Է. Լավիսը և այլ գործիչներ դիմում են Ռուսաստանի վարչապետ Պ. Ստոլիպինին՝ Ա. Ահարոնյանին ազատելու խնդրանքով, վերջինս տեղի է տալիս և հրահանգում 20.000 ռուբլի գրավով բանտից ազատել նրան²: Գրավի սահմանված չափը մեծ էր և Ա. Ահարոնյանի համար անձնապես ոչ մատչելի: Հայտնի չէ, թե ում կողմից է վճարվել այդ գումարը: Ամենայն հավանականությամբ այն վճարվել է այդ ամիսներին տարբեր երկրներում հոգուտ ՀՅԴ բանտարկյալների հանգանակված գումարներից:

Դրանով հանդերձ, կարծում ենք, Ա. Ահարոնյանին գրավով ազատելու հարցում երկրորդական դեր չի խաղացել նաև այն հանգամանքը, որ հետաքննության ընթացքում չապացուցվեցին նրա դեմ նախապես առաջադրված մեղադրանքի ամենածանր կետերը և Ա. Ահարոնյանն արդեն գլխավոր մեղադրյալների շարքում չէր: Այլապես քիչ հավանական է, որ գլխավոր մեղադրյալներից մեկը գրավով ազատվեր, ինչը չեղավ Հ. Օհանջանյանի, Ս. Մանասյանի և մյուսների դեպքում:

Դատարանում Ա. Ահարոնյանն այդպես էլ չհայտնվեց: Գրավով ազատված երկու այլ մտավորականների՝ Ավետիք Իսահակյանի և Գարեգին Խաժակի հետ, նա Իգդիրի մոտ 1911 թ. ամռանը գաղտնի անցնում է ռուս-թուրքական սահմանը: Կ. Պոլսում, որպես կովկասյան կառույցների ներկայացու-

¹ Տե՛ս նույն տեղում, թթ. 253-256:

² Մանրամասն տե՛ս Նիթեր..., Թ. հատոր, էջ 231-241: Նաև՝ Ս. Վարանդեան, ևշվ. աշխ., էջ 531:

ցիչ, մասնակցում է ՀՅԴ V ընդհանուր ժողովին, ապա արագ անցնում Եվրոպա, որտեղ Մ. Վարանդյանի հետ եռանդուն մասնակցություն է ունենում հոգուտ իր բախտակից ընկերների ազատման ծավալված քարոզչությանը: Ա. Ահարոնյանի ու Գ. Խաժակի փախուստով և Եվրոպայում ոռուսական պետության դեմ նրանցից առաջինի ծավալած քարոզչական գործունեությամբ թերևս պետք է բացատրել դատարանում նրանց բացակայությամբ իրենց հասցեին դատախազ Սերգենի հնչեցրած հետևյալ խոսքերը. «Եթե ես քանդակագործ լինեի, Դաշնակցությանն այսպիսի մի արձան կդնեի – պատվանդանը կշինեի հրացաններից, ատրձանակներից, ռումբերից ու փամփուշտներից... պատվանդանի վրա մի կողմից կկանգնեցնեի բժիշկ Օհանջանյանին՝ ավտոնոմիայի պահանջով, մյուս կողմից՝ Գ. Խաժակյանին՝ ֆեդերացիայի պահանջով, իսկ ամենից վերը կդնեի Ավետիս Ահարոնյանին՝ Դաշնակցության այդ ծաղկին»¹:

Ակնհայտ է, որ նման բնութագրումն ամենևին չէր արտացոլում իրականությունը Դաշնակցության հարցում: Այդ կերպ պարզապես յուրատեսակ վրեժ էր լուծվում դատարան չներկայացած և դատից խուսափած Ա. Ահարոնյանից և Գ. Խաժակյանից:

Բանալի բառեր – Ավետիս Ահարոնյան, «159»-ի դատավարություն, ՀՀԴ Արևելյան բյուրո, Ահաբեկիչ մարմին, «Յառաջ»-ի գրադարան, «Ալիք» թերթ, ՀՀԴ շրջանային ժողով, Էջմիածնի Կենտրոնական ժողով, Հասագայի Խաղաղության կոնֆերանս, մեդադրական ակտ:

HOVIK GRIGORYAN. *Avetis Aharonyan in the Documents of the Trial of ARF Dashnaktsutyun (1912).*

The article presents several pages of Avetis Aharonyan's biography which remained uncovered until today on the basis of unpublished documents on the trial of ARF Dashnaktsutyun in 1912, kept in National Archive of RA as well as a number of published documents of ARF Dashnaktsutyun. Based on the new documents put into scientific circulation, the article primarily

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 158:

uncovers a number of less known facts about A. Aharonyan's activities which are related to the period prior to his imprisonment (1905–1907 years). Available archive files also allow to clarify the real circumstances of the trial brought against A. Aharonyan by Russian authorities, chronology of his imprisonment and finally to reveal the details of the case, the strategy chosen by A. Aharonyan to organize his defense, the gradual evolution of the accusations against him, the circumstances of his release from arrest and several other issues.

Keywords: Avetis Aharonyan, process of 159, ARF Oriental Bureau, Terroristic Body, library of “Forward”, “Alik” newspaper, ARF regional meeting, Central Meeting at Etchmiatsin, Hague Peace Conference, act of accusation.